ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 53 - 54 (16652) ՇԱԲԱԹ, 7 ՀՈՒԼԻՍԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՄԵՆՔ ԷԿՈՆՈՄԻԿԱՅՈՒՄ ԿՀԱՍՏԱՏԵՆՔ ԱՐԴԱՐԱՑԻ ԿԱՐԳ»

ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՓՈՔՐ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԸ 5-Ի ՓՈԽԱՐԵՆ ԿԼԻՆԻ 1 ՏՈԿՈՍ

Վրաստանի հարկային օրենսդրության փոփոխությունների համաձայն, հուլիսի 1-ից փոքր բիզնեսի կարգավիճակ կստանան այն անհատ ձեռներեցները, որոնց տարեկան եկամուտը չի գերազանցում 500.000 լարին, նախկինում սահմանված 100.000 լարիի փոխարեն: Փոքր բիզնեսի կարգավիճակ ունեցող անձանց համար հարկվող եկամուտը այս տարվա հուլիսի 1-ից կկազմի 1%, նախկինում սահմանված 5% -ի փոխարեն: Բացի այդ, նրանք երկու օրացուցային տարվա ընթացքում կպահպանեն փոքր ձեռներեցի կարգավիճակը:

Փոփոխությունների համաձայն, ԱԱՀ վճարողի գրանցման փաստը փոքր ձեռնարկատիրոջը կարգավիճակից զրկելու պատճառ այլևս չի կարող լինել: Միևնույն ժամանակ, փոքր ձեռնարկատիրոջ կարգավիճակ ունեցող անձը չի վճարում ընթացիկ հարկերը:

Վերոնշյալի մասին հայտարարեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, կառավարության գրասենյակում հուլիսի 3-ին անցկացված մամլո ասուլիսում՝ նշելով, որ կառավարությունը մտադիր է երկրի էկոնոմիկայում հաստատել

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՁԵՌՆԱՄՈՒԽ ԵՂԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Վրաստանի խորհրդարանը նախարարությունների վերակազմավորման, այսպես կոչված, «փոքր կառավարության» հետ կապված օրենսդրական փոփոխությունները հաստատել է առաջին ընթերցմամբ: 116 օրենսդրական փաթեթը քննարկել են արտահերթ նիստին: Փոփոխություններին աջակցել է 84 պատգամավոր, 3-ը դեմ է արտահայտվել:

Նշենք, որ պատգամավորները փոփոխությունները երկրորդ ընթերցմամբ քննարկել են խորհրդարանային կոմիտեների ծեւաչափով, իսկ փոփոխությունների երրորդ ընթերցմամբ հաստատումը ծրագրվում է մինչեւ ընթացիկ շաբաթվա վերջը:

Հիշեցնենք, որ, նախարարների կաբինետում ներկայումս գործող 14 նախարարությունների եւ մեկ պատնախարարության փոխարեն, կմնան 10 նախարարություն եւ մեկ պետնախարարություն:

Օրենսդրական փաթեթում ներկայացված կառուցվածքային փոփոխությունները հետեւյալն են. մշակույթի եւ սպորտի նախարարությունը միավորվում է կրթության ու գիտության նախարարության հետ: Նոր գերատեսչությունը կկոչվի կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն:

Վերացվում է քրեա-կատարողական եւ պրոբացիայի նախարարությունը: Այդ գերատեսչության իրավասությունները (բացառությամբ՝ քաղաքացիական եւ հատուկ պենիտենցիալ ծառայության, գլխավոր տեսչության, տեղական խորհուրդների ու հոգեբանական հանձնաժողովի այն գործառույթների եւ լիազորությունների) փոխանցվում են արդարադատության նախարարությանը: Ընդ որում, քրեա-կատարողական եւ պրոբացիայի նա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԳԵՐՄԱՆԻԱ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՈՒ ԱԼՅԱՆՍԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հուլիսի 2-5-ը Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին աշխատանքային այցով գտնվում էր Գերմանիայում: Այցի շրջանակներում, Վրաստանի ԱԳ նախարարը հանդիպում ունեցավ իր գերմանացի գործընկեր Հայկո Մասի հետ:

Հանդիպմանը կողմերը, երկկողմ համագործակցության հարցերին զուգընթաց, քննարկեցին նաեւ Եվրամիությանը եւ Հյուսիսատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման հարցը:

Ըստ Գերմանիայի ԱԳ նախարարի, հուլիսի 11-12-ին Բրյուսելում անցկացվելիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովում Վրաստանի որպես ալյանսի մերձավոր գործընկերոջ ներկայությունն արտակարգ նշանակություն ունի ինտեգրման հետագա գործընթացի համար: Գերմանական կողմը կրկին անգամ հաստատեց իր հավատարմությունը Վրաստանի տարածքային ամբողջականության համար եւ նշեց, որ այդ թեման «Առեւտրի առարկա» չի կարող:

Կողմերն անդրադարձան նաեւ հակամարտության թեմային: Մասնավորապես, Դավիթ Զալկալիանին, խոսելով Վրաստանի կառավարության խաղաղարար նախաձեռնությունների մասին, ընդգծեց Ժնեւի միջազգային բանակցություններում Եվրամիության համանախագահության դերի նշանակությունը:

Աշխատանքային այցի շրջանակներում, Վրաստանի ԱԳ նախարարը հանդիպումներ ունեցավ նաեւ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով կանցլերի խորհրդական Յան Հեկերի, Գերմանիայի բունդեսթագի պաշտպանության կոմիտեի նախագահ Վոլֆգանգ Հելմիխոմի, միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահ Նորբերտ Ռյոդգենի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՈՒԼԻՍԻ 5-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Հուլիսի 5-ին Հայաստանը նշեց Սահմանադրության օրը: 1995 թվականի հուլիսի 5-ին, այն ժամանակ երկրում իշխող կուսակցության՝ Հայոց համազգային շարժման պատրաստած Հիմնական օրենքի նախագիծը դրվեց համազգային հանրաքվեի եւ հավանության արժանացավ ժողովրդի կողմից: Այն անկախ Հայաստանի առաջին սահմանադրությունն էր:

Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարվեցին 2005 թվականին: Հետագայում փոփոխություններ կատարվեցին նաեւ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին՝ հանրաքվեով, որով Հայաստանն անցում կատարեց կառավարման խորհրդարանական համակարգի:

ՀՀ սահմանադրության Հոդված 1-ի համաձայն, Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Հոդված 2-ում էլ սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաեւ սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

ՀՐԱՏԱՊ

ՀՐԱՎԻՐՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Հուլիսի 6-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հրավիրեց Ազգային անվտանգության խորհրդի նիստ:

Նիստի աշխատանքին մասնակցեց երկրի նորընտիր վարչապետ Մամուկա Բախտաձեն:

Նիստի օրակարգում ընդգրկվել էին ՆԱՏՕ-ի գագաթաժողովի նախապատրաստման հարցում իշխանության համակարգման եւ պաշտպանության ոլորտում բարեփոխումների ընթացքի հարցերը: Անվտանգության խորհրդի նիստում զեկուցումներով հանդես եկան Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին, պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վլադիմիր Չաչիբաիան:

ԿՐԹԱԿԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՇՈԳԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՓՈԽՎԵԼ Է ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ինչպես արդեն հաղորդել էինք, հուլիսի 2-ին, վրաց լեզվի եւ գրականության քննությամբ, Վրաստանի բուհերում մեկնարկելու էին ընդունելության Միասնական ազգային քննությունները: Թեպետ, ազգային քննչական կենտրոնի տեղեկատվությամբ, հուլիսի 2-ին եւ 3-ին ինտենսիվ շոգերի պատճառով, փոխվել է Միասնական ազգային քննությունների (վրաց լեզվի եւ գրականության ու ընդհանուր հմտությունների քննությունների) ժամանակացույցը:

Այսպես, հուլիսի 2-ին եւ 3-ին նախատեսված վրաց լեզվի եւ գրականության քննության երկրորդ սեսիան անցկացվեց հուլիսի 4-ին եւ 5-ի առավոտյան: Այսինքն, դիմորդները, որոնք պետք է ներկայանային հուլիսի 2-ին, ժամը 14:00-ին, վրաց լեզվի եւ գրականության քննությանը մասնակցելու համար, նույն քննությունը հանձնեցին հուլիսի 4-ին, ժամը 08:00-ին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՁԵՌՆԱՄՈՒԽ ԵՂԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խարարության քաղաքացիական ու հատուկ պենիտենցիալ ծառայության, գլխավոր տեսչության, տեղական խորհուրդների եւ հոգեբանական հանձնաժողովի գործառույթներն ու լիազորությունները կփոխանցվեն արդարադատության նախարարությանը ենթակա հատուկ պենիտենցիալ ծառայությանը:

Վերացվում է նաեւ բռնազավթված տարածքներից բռնագաղթած անձանց, փախստականների եւ վերաբնակեցման նախարարությունը: Հիմնվում է բռնազավթված տարածքներից բռնագաղթված անձանց հարցերով, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարություն: Ավելի կոնկրետ, բռնազավթված տարածքներից բռնագաղթված անձանց, փախստականների եւ վերաբնակեցման (բացառությամբ՝ փախստականներին երկարաժամկետ բնակտարածքով ապահովելու համար շինարարական ու վերանորոգման աշխատանքների ուղղվածության, գաղթի եւ միջազգային պաշտպանության ուղղվածության, վերաբնակեցման ուղղվածության) ու աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության գործառույթներն ու լիազորությունները փոխանցվում են բռնազավթված տարածքներից բռնագաղթված անձանց աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության հարցերով նախարարությանը: Ընդ որում, բռնազավթված տարածքներից բռնագաղթված անձանց, փախստականների եւ վերաբնակեցման հարցերով նախարարության գործառույթները, որոնք վերաբերում են փախստականներին երկարաժամկետ բնակտարածքով ապահովման համար շինարարական ու վերանորոգման աշխատանքներին, փոխանցվում են տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությանը: Գաղթի եւ միջազգային պաշտպանության ուղղությունները փոխանցվում են ներքին գործերի նախարարությանը, իսկ վերաբնակեցման ուղղությունն անցնում է հաշտեցման ու քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի աշխատակազմին:

Կառավարության կառուցվածքային բարեփոխումների շրջանակներում, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության վերակարգավորման զարգացման ուղղությամբ գործառույթը փոխանցվում է տարածաշրջանային զարգացման ու ենթակառույցների նախարարությանը:



ՉԻՆԱՍՏԱՆ

ՄԱՔՍԵՐ՝ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՆ

Չինաստանը հուլիսի 6-ին սահմանել է ամերիկյան ապրանքների ներմուծման՝ 34 միլիարդ դոլարի ծավալով 25 տոկոս մաքս՝ ի պատասխան Վաշինգտոնի կողմից համանման գործողությունների:

Նշենք, որ ԱՄՆ-ը հուլիսի 6-ին ներմուծման մաքս է սահմանել Չինաստանից 818 անուն ապրանքների համար՝ ընդհանուր ծավալով 34 միլիարդ դոլար: Որպես հակամիջոց՝ Չինաստանը նույն օրը 25 տոկոս մաքս է սահմանել ամերիկյան ապրանքների համարժեք ծավալի ներմուծման համար:

ԻՐԱՆ

ԱՐԳԵԼՔՆԵՐ՝ ՆԱՎԹԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆԸ

Իրանի նախագահ Հասան Ռոուհանին հայտարարել է իրանական նավթի արտահանման արգելքի վերաբերյալ ԱՄՆ-ի ազդարարած պատժամիջոցների անհեթեթության մասին:

- Ամերիկացիները հայտարարել են, թե ցանկանում են լիովին դադարեցնել իրանական նավթի արտահանումը, բայց նրանք չեն հասկանում, թե ինչ են ասում:

Դա անիմաստ է, քանի որ Իրանը չի կարող արտահանել իր նավթը, մինչդեռ (մերձավորարեւելյան) նավթը միեւնույն է կշարունակի ստացվել արտաքին շուկաներում,- հայտարարել է Ռոուհանին:

ԱԴՐԲԵՋԱՆ

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԻ ԽԱՓԱՆՈՒՄԸ ՀԱՆԳԵՑՐԵՑ ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՀՈՍԱՆՔԱԶՐԿՄԱՆ

Ադրբեջանում հուլիսի 2-ի լույս 3-ի գիշերը Մինգեչաուրիում գործող 30-ամյա հնության տրանսֆորմատորի խափանման պատճառով, տեղ գտավ լայնամասշտաբ հոսանքազրկում: Առանց հոսանքի մնացած քաղաքների թվում էին Բաքուն, Սումգայիթը, Շիրվանը, Գյանջան, Զաքաթալան եւ այլն: Բաքվի մետրոպոլիտենի աշխատանքի խափանման պատճառով, քաղաքային տրանսպորտի մյուս տեսակները գործել են արտակարգ ռեժիմով ու անվճար: Լուրջ հիմնախնդիրներ են ծագել նաեւ քաղաքների ջրամատակարարման հարցում:

Նշենք, որ ՄինգեչաուրիՀԷԿ-ում տեղի ունեցած վթարի պատճառով, Վրաստանը, ընդառաջելով Ադրբեջանի իշխանությունների խնդրանքին, գրեթե կրկնապատկել է այդ երկիր արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալը, որի շնորհիվ, Բաքվում եւ մի քանի քաղաքներում էլեկտրականության մատակարարումը վերականգնվել է:

ԱԶԱՐԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԶՈՒՐԱԲ ՊԱՏԱՐԱԶԵԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Հուլիսի 5-ին Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության նախագահ Զուրաբ Պատարածեն հրաժարական է տվել:

Ելույթ ունենալով հատուկ հրավիրված ճեպասուլիսում՝ Զուրաբ Պատարածեն ամփոփեց 2016 թվականի հուլիսից՝ այդ պաշտոնում նշանակվելու պահից մինչ օրս, կատարած աշխատանքի արդյունքները, խոսեց իրականացված գործերի մասին՝ դրանում ընդգծելով «Քարթու» հիմնադրամի եւ դրա ղեկավար Բիձինա Իվանիշվիլու դերը:

Ավելացնենք, որ Զուրաբ Պատարածեի հրաժարականից հետո հրաժարական տվեց նաեւ Աջարիայի նախարարների կաբինետը:

Նշենք, որ Վրաստանի նախագահը ինքնավար հանրապետության կառավարության նոր նախագահի թեկնածությունը պետք է առաջադրի Աջարիայի Գերագույն խորհրդի անդամներին, խորհրդակցությունից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում: Իսկ ներկայացնելուց անմիջապես հետո, նոր նախագահը պետք է առաջադրի նախարարների կազմը: Վերջնականապես, Աջարիայի Գերագույն խորհուրդը պետք է վստահություն հայտնի:

ՏԱՐԵՐՔ

ՍՎԱՆԵԹԻ. ՎԱՐԱՐԱԾ ՆԵՆՍԿՐԱՆ ԼՈՒՐՋ ՎՆԱՍՆԵՐ Է ՀԱՍՑՐԵԼ

Սվանեթիի ճուբերի գյուղում հունից դուրս եկած Նենսկրա գետի ջրերը հիմնովին քանդել են երկհարկանի տունը, անասնագոմերը, կամուրջները, ցանքատարածքները:

Մարդկային զոհեր չկան, թեպետ վավերացվել են ընտանի կենդանիների զգալի կորուստներ: Հուլիսի 6-ին տարերային աղետի վայր ժամանեցին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Մայա Ցքիտիշվիլին, բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին, բռնագաղթվածների, փախստականների եւ վերաբնակեցման հարցերով նախարար Սոզար Սուբարին:

Ինչպես նշեց վարչապետը, իրավիճակը վերահսկողության տակ է: Տարերքի վայրում աշխատում են Թբիլիսիից, Իմերեթիի եւ Սամեգրելոյի երկրամասերից

ժամանած փրկարարների խմբեր, արտակարգ իրավիճակների կառավարման ծառայության աշխատակիցներ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ՎՐԱՑԱԿԱՆ ԲԻԶՆԵՍՈՒՄ

Վերջին ժամանակներս նշանակալիորեն ավելացել է Ռուսաստանի քաղաքացիների կողմից Վրաստանում ձեւավորված ձեռներեցական ընկերությունների թիվը:

Վերջին քսան տարիների ընթացքում, ռուսական կապիտալը արագընթաց տեմպերով է ներդրվում Վրաստանի շուկայում: Մասնավորապես, Ռուսաստանի պետական էներգետիկական «Ինտերռաո» հոլդինգը, որի բաժնետերը ռուսական պետական ընկերություններն են, Վրաստանի էլեկտրաէներգիայի բաշխման ընկերության 75 տոկոսի սեփականատերն է: Ռուսաստանի քաղաքացի Մեւլուդ Բլիաձեին է պատկանում ՍՊԸ «Էներգիան», որի տնօրինության տակ են Դարիալի, Լարսի եւ Շիլդայի էլեկտրակայանները: Ռուսաստանի քաղաքացիներին են պատկանում նաեւ Ալանիի, Ալգեթիի հիդրոէլեկտրակայանները: Ռուսաստանի քաղաքացիներին են պատկանում նաեւ Վրաստանի տարածքում գործող «Լուկոյլի», «Գալֆ», «Փոթի» նավթի տերմինալ» ընկերությունները, թանկարժեք մետաղների հայտնաբերման ու մշակման «RMG Gold», «RMG Copper» ընկերությունները, հաստատուն հոսանքի մայրուղային լոկոմոտիվների արտադրության գործարանը, VTB բանկ Ջորջիան, «Բիլայն» բջջային ընկերությունը եւ այլն:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

საქართველოს ოუსტიციის სამინისტრო

ՀԱՍՏԱՏՎԵՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2018 թվականի հուլիսի 1-ից Վրաստանի կառավարության որոշմամբ, հաստատվեց պարտադիր տեխնիկական ռեգլամենտը, ինչը նախատեսում է որակյալ էլեկտրոնային ստորագրում եւ որակյալ էլեկտրոնային տվյալների կառավարման, տվյալների պահուստային պատճենների ստեղծման կարգը, կարգավորում է գերատեսչություններին եւ առանձին անհատներին որակյալ հուսալի սպասարկման մատուցումը:

Իրականացված փոփոխությունը նպաստում է երկրում որակյալ էլեկտրոնային ստորագրման լայն կիրարկմանը, ինչը էլեկտրոնային կառավարման նշանակալի բաղադրիչ է: Նշենք, որ որակյալ էլեկտրոնային ստորագրությունը նյութական իրական ստորագրության հետ հավասար իրավաբանական ուժ ունի, եւ դրա կեղծումը գործանականում անհնարին է:

Նշենք, որ էլեկտրոնային կառավարման զարգացումը Վրաստանի կառավարության գլխավոր առաջնահերթություններից է: Դրա նպատակը հանրային գերատեսչություններում ներքին գործընթացների թվայնացման եւ քաղաքացիներին ու գործարարներին դյուրացված ծառայությունների մատուցմանը կողմնորոշված եւ որակյալ էլեկտրոնային պետական սպասարկումների ներկայացումն է: Այդ նպատակին հասնելու համար, կառավարությունը ինտենսիվորեն գործում է պետական սպասարկումների ձեւավորման եւ մատուցման միասնական հարթակի ստեղծման ուղղությամբ, ինչը, սպասարկումների ֆիզիկական մատուցման հետ միասին, նախատեսում է նաեւ օնլայն սպասարկումների առաջարկում: Էլեկտրոնային որակյալ ստորագրության ավելացմամբ արագացվում է ծառայության մատուցման ընթացքն ու քաղաքացիներին հնարավորություն ընձեռում հեռավորության վրա եւ անվտանգ ստանալ պետական սպասարկումներ:

Նշենք, որ մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը Վրաստանի արդարադատության նախարարության «Պետական սպասարկումների զարգացման գործակալություն» ՍՊԸ-ն որակյալ հուսալի սպասարկումների միակ մատուցողն էր: Հուլիսի 1-ից «Էլեկտրոնային փաստաթղթերի եւ էլեկտրոնային հուսալի սպասարկման մասին» Վրաստանի օրենքների պահանջների համաձայն, ով ցանկանում է դառնալ որակյալ հուսալի սպասարկումներ մատուցող, պարտավոր է Վրաստանի արդարադատության նախարարության «Տվյալների փոխանակման գործակալություն» ՍՊԸ-ում անցնել ավտորիզացիա: Տեխնիկական ընթացակարգով սահմանված չափորոշիչների պաշտպանությունը պարտադիր է, որպեսզի անձը դառնա որակյալ հուսալի սպասարկումներ մատուցող:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎԻԶԱ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ ՄԵԿՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ԱՆՑՆԵԼ ՎՃԱՐՈՎԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ

Եվրախորհրդարանն աջակցել է անայցեգրային ռեժիմ ունեցող երկրների, այդ թվում՝ Վրաստանի քաղաքացիների համար, վճարովի էլեկտրոնային գրանցման հաստատմանը:



Օրինագծին, որը նախատեսում է Եվրամիության ուղեւորների լրատվական եւ ավտորիզացիայի համակարգի՝ «ETIAS»-ի ստեղծում, աջակցել է Եվրախորհրդարանի 494 անդամ, դեմ է արտահայտվել 115-ը, իսկ 30-ը ձեռնպահ է մնացել:

Սահմանային հսկման նոր համակարգը գործելու է 2021 թվականից: Էլեկտրոնային ավտորիզացիայի արժեքը կազմելու է 7 եվրո: Ավտորիզացիան մինչեւ 18 տարեկանների եւ 70 տարին անց անձանց համար լինելու է անվճար:

Ավտորիզացիա անցնելուց հետո, այն գործելու է երեք տարվա ընթացքում:

Անձը ավտորիզացիայի պատասխանը կստանա ապլիկացիան լրացնելուց անմիջապես հետո:

Ապլիկացիայում անձնական տվյալների մասին հարցերից բացի, հարցեր են լինելու նախկինում դատվածության կամ ապլիկանտի կողմից հակամարտության գոտիներում գտնվելու մասին:

Եվրախորհրդարանի կողմից նախաձեռնության հաստատումից հետո, փաստաթղթին պետք է աջակցի Եվրամիության նախարարների խորհուրդը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ՝ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ ԹՈՒՆԱՎՈՐ ՀԵՂՈՒԿ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ

Վրաստանի պետական անվտանգության ծառայությունը Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան միջազգային օդանավակայանում ձերբակալել է Ռուսաստանի քաղաքացու, որը մեղադրվում է թունավոր հեղուկ տարածելու մեջ, ինչի հետեւանքով մարդիկ են թունավորվել: Դեպքը տեղի է ունեցել հուլիսի 2-ին:

«Հետաքննությունը պարզել է, որ Դմիտրի Բ.-ն 2018 թ. հուլիսի 2-ին Թբիլիսիի միջազգային օդանավակայանում առողջության համար վտանգավոր նյութ պարունակող հեղուկ է տարածել: Հետաքննությունը վարում է պետական անվտանգության ծառայության հակահետախուզության վարչությունը»,- նշված է ՊԱԾ-ի տարածած հաղորդագրության մեջ:

Թբիլիսիի օդանավակայանի լրատվական ծառայությունը հաստատում է, որ թունավորված անձինք օդանավակայանի աշխատակիցներն են:

ԱՌԳՐԱՎՎԵԼ Է ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԱՊՕՐԻՆԻ ՀՐԱՁԵՆ

Ընթացիկ տարվա վեց ամիսների ընթացքում, Վրաստանի ներքին գործերի նախարարությունն առգրավել է 202 միավոր ապօրինի հրազեն եւ 1877 մարտական փամփուշտ: Վերջին նման առգրավումը տեղի է ունեցել Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում: Ախալքալաքիի մունիցիպալիտետի Մոդեգան գյուղում ձերբակալվել է 1969 թվականին ծնված, Ռուսաստանի քաղաքացի Ս.Տ.-ն, որը մեղադրվում էր ընտանեկան բռնության եւ հրազենի ապօրինի պահելու մեջ:

Հետաքննությամբ պարզվել է, որ Ս.Տ.-ն բառացի եւ փիզիկական վիրավորանք է հասցրել որդուն՝ Ա.Տ.-ին: Բացի այդ, օպերատիվ տեղեկատվության համաձայն, ձերբակալվածի տանը խուզարկության ժամանակ հայտնաբերվել է ատրճանակ, 218 մարտական փամփուշտ, ռռնակ, այլ զինամթերք:

Ապրիլին հրազենի առգրավման փաստ է վավերացվել նաեւ Կախեթիում: Այստեղ ձերբակալվել է Լամբալո գյուղի բնակիչ Ռ.Ու.-ն: Նրա տանը հայտնաբերվել է «Մակարով» եւ «Գոլդստար» մակնիշի ատրճանակներ, 40 մարտական փամփուշտ:

ՇՆՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԵՂԱԴՐԱՆՔ

Վրաստանի ներքին գործերի նախարարության հայտարարությամբ, Թբիլիսիում անչափահասների թրաֆիքինգի մեղադրանքով, ձերբակալվել է 2 անձ:

- Հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչության թրաֆիքինգի եւ անօրինական միգրացիայի դեմ պայքարի բաժնի աշխատակիցները, Վրաստանի գլխավոր դատախազության եւ առողջապահության նախարարության սոցիալական ծառայությունների գործակալության հետ համագործակցությամբ, անչափահասների թրաֆիքինգի մեղադրանքով ձերբակալել են 1957թ. ծնված Պ.Մ.-ին եւ նրա ամուսնուն՝ 1959 թվականին ծնված Ա.Մ.-ին: Նրանց կողմից կատարված հանցագործությունը նախատեսում է 17-20 տարվա ազատազրկում կամ ցմահ բանտարկություն:

Հետաքննությունը պարզել է, որ մեղադրվող ամուսինները ապօրինի աշխատանքով շահագործում էին 2010 թվականին ծնված անչափահաս երեխաների: Ավելի կոնկրետ, նրանք սպառնալով, երեխաներին ստիպում էին Թբիլիսիում, Պեկինի փողոցի վրա գտնվող լուսակիրների մոտ, մետրոյի կայարանների մուտքերի եւ մետրոյի վագոններում խղճահարություն առաջացնելու միջոցով գումար հավաքել,- հայտարարել է ՆԳՆ կենտրոնական քրեական ոստիկանության տեսչության կազմակերպված հանցագործության գլխավոր վարչության պետ Մամուկա Ճելիձեն եւ հավելել, որ հետաքննությունը ընթանում է Վրաստանի քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 3-րդ մասի ա, բ, գ, եւ 4-րդ մասի ա ենթակետերով, որը նկատի ունի կազմակերպված խմբի կողմից ստիպողաբար կամ խաբելով 2 կամ ավելի անչաֆահասի թրաֆիքինգ:



ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՀԱՎԱԿՆՈՒՄ Է 3 ԹԵԿՆԱԾՈՒ

Ներկա դրությամբ, Վրաստանի գլխավոր դատախազի թափուր պաշտոնին հավակնում է 3 թեկնածու: Դրանք են՝ Շալվա Թադումածեն, Շալվա Շավգուլիձեն եւ Նինո Գոգնիաշվիլին:

Նինո Գոգնիաշվիլու եւ Շալվա Թադումածեի թեկնածություններն առաջադրել է Թբիլիսիի պետական համալսարանը, իսկ Շալվա Շավգուլիձեի թեկնածությունը՝ «Եվրոպական Վրաստան» քաղաքական կուսակցությունը: Նշենք, որ Շալվա Թադումածեն կառավարության աշխատակազմի ղեկավարն է, Շալվա Շավգուլիձեն՝ նախկին պատգամավոր, իսկ Նինո Գոգնիաշվիլին ԹՊՀ-ի աստստենտ-պրոֆեսոր է:

Ավելացնենք, որ երկրի գլխավոր դատախազի պաշտոնը թափուր դարձավ Խորավայի փողոցում տեղի ունեցած սպանության գործով նախկին գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի հրաժարականից հետո:

ԱՎԵԼԱՑԵԼ Է ԶԲԱՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ

Վրաստանի զբաստաշրջության ազգային վարչության տեղեկատվությամբ, որը երկրի ՆԳ նախարարությունը փոխանցել է Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությանը, 2018 թվականի հունիսին կայացել է 727385 միջազգային զբոսաշրջիկի այց Վրաստան:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճը կազմել է 13,8 տոկոս: Տեղեկատվության համաձայն, միջազգային այցելուների իրականացրած այցերի քանակը կազմել է 606 792, աճը 14,2 տոկոս է: Տուրիստական այցերի քանակը 399 989 է, որը 68 550-ով ավելի է 2017 թվականի հունիսի ցուցանիշից (20,7 տոկոս աճ):

ԲԱՐՁՐԱՑՎԵԼ Է ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Երկրի ներքին գործերի նախարարության կողմից տարածված հաղորդագրությունում նշվում է, որ ընթացիկ տարվա հուլիսի 1-ից ոստիկանների աշխատավարձերն ավելացել են 250 լարիով: Ավելացված աշխատավարձ կստանա 13,2 հազար ՆԳՆ աշխատակից: Նաեւ նշվում է, որ աշխատավարձերի բարձրացումը կշարունակվի նաեւ 2019 թվականին: Վրաստանում ոստիկանների միջին աշխատավարձը կազմում է 900 լարի (ավելի քան 367,3 դոլար):

Ընդգծվել է նաեւ, որ Վրաստանի ներքին գործերի նախարարությունը մտադիր է զբաղվել ոստիկաններին բնակարանի ապահովման հարցով:

ԱՌԱՁԱՆԳ

ԶԳՈՒՇԱՑԵ'Ք. ԿՈԼՈՐԱԴՅԱՆ ԲԶԵԶԸ ՆՈՐԻՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ Է

Կարտոֆիլագործների հիմնական հոգսը կարտոֆիլի տերեւները ոչնչացնող կոլորադյան բզեզն է: Մարդիկ տարբեր միջոցներ են ձեռնարկում վնասատուից ազատվելու համար:

Ինչպես JNews-ի թղթակից Գայանե Ակոջյանին տեղեկացրեց Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության եւ գյուղատնտեսության նախարարության Ախալքալաքիի տեղեկախորհրդատվական կենտրոնի փորձագետ Ռամազ Գոգոլաձեն, կարտոֆիլի «թշնամին»՝ կոլորադյան բզեզը, նորից հայտնվել է մունիցիպալիտետի ցանքատարածություններում: Ամեն տարի հողագործները հույս են փայփայում, որ այս տարի բզեզը չի վնասի կարտոֆիլի դաշտերը, սակայն ամեն տարի այն հայտնվում է ու նորից բազմանում:

Ռամազ Գոգոլաձեն թղթակցի հետ զրույցում խոսեց ժամանակակից տեխնոլոգիաների մասին, որոնց շնորհիվ էլ կարելի է ոչնչացնել կոլորադյան բզեզը:

- Կարտոֆիլը ցանելու ժամանակ, պետք է այն դեղել հատուկ դեղերով, քանի որ երբ կարտոֆիլն աճի, այլեւս կոլորադյան բզեզը չի լինի վրան: Այն հիմնականում տարածված է Ախալքալաքիի մունիցիպալիտետում:

Եթե սերմը դեղվում է մինչեւ ցանելը, այդ խնդիրն արդեն լուծվում է, սակայն այդ դեղը թանկ է եւ պահանջում է որոշակի ժամանակ ու աշխատանք: Այդ իսկ պատճառով էլ, հողագործները դժվարանում են անել այդ գործը: Հիմնականում դեղում են, երբ արդեն կարտոֆիլն աճել է,- ասում է ավագ մասնագետ Ռ.Գոգոլաձեն:

Կոլորադյան բզեզը հիմնականում բազմանում է այն դաշտերում, որտեղ երկու կամ ավելի տարի անընդմեջ կարտոֆիլ է ցանվում, ցանքաշրջանառություն չի իրականացվում: Նախորդ տարվա հողում մնացած կարտոֆիլն աճում է, այդ իսկ պատճառով էլ կոլորադյան բզեզը հին կարտոֆիլից է հիմնականում տարածվում նորի վրա:

Մեկ հեկտար կարտոֆիլի ցանքատարածությունը դեղելու համար հարկավոր է առնվազն 50-60 լարիի դեղորայք:

Ռամազ Գոգոլաձեն խորհուրդ է տալիս, որ ավելի լավ է դեղել այն ժամանակ, երբ կարտոֆիլի ծիլերը նոր են դուրս գալիս հողից, եւ ոչ թե կարտոֆիլի ծաղկման ժամանակ, քանի որ այդ շրջանում 15-30%-ով բերքատվությունը նվազում է:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱԶԵ. «ՄԵՆՔ ԷԿՈՆՈՄԻԿԱՅՈՒՄ ԿՀԱՍՏԱՏԵՆՔ ԱՐԴԱՐԱՑԻ ԿԱՐԳ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

արդարացի կարգ:

Նրա խոսքով, կհաստատվի տնտեսական մոդել, որն ուղղված կլինի երկրում աղքատության հաղթահարմանը:

- Ինչպես մենք խոստացել ենք մեր հասարակությանը, էկոնոմիկայում կհաստատենք արդարացի խաղի կանոններ, կստեղծենք տնտեսական այնպիսի մոդել, որը կողմնորոշված կլինի գլխավոր մարտահրավերների՝ երկրում աղքատության հաղթահարմանը,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց.

- Մեր քաղաքական թիմին բաժին է ընկել տնտեսական այնպիսի մոդել, երբ փոքր ձեռներեցների համար հարկային բեռը ավելի մեծ էր, քան խոշոր գործարարների համար, այնպիսի մոդել, որի ժամանակ փոքր ձեռներեցների առջեւ ծառացած էին նշանակալի արգելքներ, որոնք դժվարություններ էին առաջացնում ծառայություններից եւ շուկայից օգտվելու հարցում: Բացի այդ, հարկային վարչարարությունը փոքր ձեռներեցներին պարտադրում էր գործել ստվերային էկոնոմիկայում: Մեր գլխավոր խնդիրն է հաղթահարել աղքատությունը, իսկ դրա միակ ուղին միկրո, փոքր եւ միջին գործարարության խրախուսումն է: Դա միակ ելքն է տնտեսական մարտահրավերների հաղթահարման համար:

Վարչապետի խոսքով, երկրում ներկա դրությամբ, կիրարկվել է հարկային բացառիկ կարգ:

- Դա մասշտաբային բարեփոխում է, որն առնչվում է ձեռներեց ֆիզիկական անձանց գրեթե 100 տոկոսին,- հայտարարեց Բախտաձեն եւ հավելեց, որ խոսքը վերաբերում է ավելի քան 120 հազար ձեռներեցի:

- Այսօրվանից կիրարկվում է հարկային բացառիկ կարգ, ըստ որի, փոքր ձեռներեցների հարկը շրջանառությունից գրեթե հնգապատիկ կրճատվում է: Մեր խորհրդարանական թիմը պաշտպանեց սույն նախաձեռնությունը, եւ արդյունքում՝ օրենսդիր մարմինը հաստատեց հարկային օրենսգրքի համապատասխան փոփոխությունները, որոնք այսօր էլ մտան ուժի մեջ: Ցանկանում եմ խոսել հարկային բացառիկ կարգի մասին, որը մենք առաջարկում ենք փոքր ձեռներեցներին՝ փոքր ձեռներեցի կարգավիճակ է տրվում այն արտադրողներին, ում եկամուտը տարեկան ներկայումս գործող մինչեւ 100 հազարի փոխարեն, կկազմի 500 հազար լարի: Փոքր ձեռներեցների համար եկամուտի հարկադրումը 5-ից նվազեցվում է մինչեւ մեկ տոկոս: Փոքր ձեռներեցության համար պահպանվում է հարկային պարզունակ հաշվառում, հարկերի վճարումն ու հայտագրումը իրականացվում է ամեն ամիս եւ ոչ թե այսպես կոչված նախավճարման հարկով, ինչը նշանակալի հիմնախնդիր է մեր ձեռներեցների համար: Փոքր ձեռներեցները հնարավորություն կունենան գրանցվել որպես հավելյալ արժեքի հարկատուներ, թեպետ դա չի նշանակում, որ նրանք կկորցնեն փոքր ձեռներեցի կարգավիճակը: Հարկային նոր նախաձեռնությունը մի կողմից փոքր ձեռներեցների համար սահմանում է հարկային նվազագույն բեռ, մյուս կողմից նրանց համար ապահովում է հարկային վարչարարության նվազագույն ծախսեր,- ընդգծեց վարչապետն ու հավելեց.

- Վերոնշյալ հարկային կարգից կարող են օգտվել ինքնազբաղված քաղաքացիները, ում համար հարկային նման արտոնությունը նշանակալի դեր է կատարում տնտեսական գործունեության շարունակման համար:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՉԻ ԳԵՐԱԶԱՆՑԻ ՀՆԱ-Ի 3,9 ՏՈԿՈՍԸ

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն խորհրդարանի հաստատմանը ներկայացրած կառավարական ծրագրում առանձնակի նշել էր, որ պետական հաստատություններում աշխատողների աշխատավարձը չպետք է գերազանցի Համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) 3,9 տոկոսը:

Վարչապետի սույն հայտարարությունը հիմնված է ֆինանսների նախարարության կողմից անցկացված ստուգման տվյալների վրա: Ըստ որի, կառավարության կողմից հիմնված ՀԻԻԱ-ներում արտահաստիքային կարգով աշխատում են 38 470 մարդիկ, ովքեր աշխատավարձ են ստանում: Իսկ, ընդհանուր առմամբ, այդ հաստատություններում աշխատում է 150 305 մարդ:

Համեմատելու համար նշենք, որ երկրի զինված ուժերում հաշվառված է ընդամենը 40 000 մարդ:

Ընդհանուր առմամբ, Վրաստանի պետական հաստատություններում աշխատում է 283 000 մարդ, ինչը կազմում է երկրի ընդհանուր բնակչության 7,8 տոկոսը:

Ավելացնենք, որ 2018 թվականի բյուջեում նախատեսված է հանրային աշխատողների համար 1,4 մլն աշխատավարձ: Թեպետ, մասնագետների գնահատմամբ, դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ դրանում հաշվի չի առնվել ՀԻԻԱ-ներին տրվող գումարը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՀՄՈՒՆԱՎԼԵԳՈՒՆ ՍԱՄՍԱԽՈՒՐՈ

ՓՈՔՐ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՒՄ Է ՄԵԿ ՏՈԿՈՍԻ

Հուլիսի 1-ից, փոքր ձեռներեցության աջակցության եւ խրախուսման նպատակով, ուժի մեջ է մտել հարկադրման արտոնյալ կարգը: Մասշտաբային հարկային փոփոխությունն առնչվում է ավելի քան 120 հազար ձեռներեցի: Օրենսգրքում իրականացված փոփոխությունների պատճառով, Վրաստանի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին անցկացրեց մամլո ասուլիս:

Հարկային նոր կարգը մի կողմից փոքր ձեռներեցների համար սահմանում է նվազագույն հարկադրույքը (1 տոկոս), մյուս կողմից ձեռներեցների համար դյուրացված հարկային հաշվառման միջոցով նվազագույնի են հասցվում հարկային վարչարարության ծախսերը: Վերոնշյալ բարեփոխման արդյունքում, ներքին համախառն արտադրանքի ծավալում նշանակալիորեն կավելանա փոքր ձեռներեցության բաժինը:

Հարկային նոր բարեփոխումն ապահովում է հատվածի առավել թափանցիկությունը, ինչն իր հերթին, նպաստում է փոքր ձեռներեցության համար ֆինանսական ռեսուրսների մատչելիությանը: Հարկադրման արտոնյալ կարգը նշանակալի ազդակ է փոքր ձեռներեցության հետագա զարգացման համար:

Հարկային օրենսդրությունում իրականացված փոփոխությունների համաձայն, փոքր ձեռներեցության կարգավիճակ է շնորհվում գործարար ֆիզիկական անձանց, ում միասնական օրացուցային տարվա եկամուտը, նախկինում սահմանված 100 հազարի դիմաց, կազմում է մինչեւ 500 հազար լարի:

Ինչպես պարզաբանեց եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին, փոքր ձեռներեցության կարգավիճակ ունեցող անձանց եկամտահարկը ընթացիկ տարվա հուլիսի 1-ից սահմանվում է մեկ տոկոսի չափով, նախկինում գործող 5 տոկոսի փոխարեն: Միաժամանակ, անկախ նրանից, որ եկամուտը գերազանցում է 500 հազար լարին, փոքր ձեռներեցի կարգավիճակը պահպանվում է երկու օրացուցային տարվա ընթացքում:

Փոփոխությունների համաձայն, փոքր ձեռներեցության կարգավիճակի վերացման պատճառ չի կարող հանդիսանալ արտադրող ֆիզիկական անձի՝ որպես հավելյալ արժեքի վճարողի գրանցումը: Միաժամանակ, փոքր ձեռներեցի կարգավիճակ ունեցող անձը չի վճարում ընթացիկ հարկերը եւ հայտագրումն իրականացնում է ամենամյա դյուրացված հայտագրի ձեւաչափով:

Ինչպես նշվեց մամլո ասուլիսում, փոքր ձեռներեցի կարգավիճակ ընձեռվում է արտադրող ֆիզիկական անձին: Որպես ֆիզիկական անձ արտադրողի գրանցումը (օրինակ, ստեղծագործական գործունեության իրականացման դեպքում) իրականացվում է եկամուտների ծառայության կողմից, իսկ եթե անձը, ելնելով իր գործունեությունից, «Ձեռներեցության մասին» օրենքի համաձայն, հաշվառվում է որպես անհատական ձեռներեց, ապա մինչեւ փոքր ձեռներեցի կարգավիճակի ստացումը պարտավոր է գրանցել որպես անհատական ձեռներեց:

Անհատական ձեռներեց գրանցում է Վրաստանի արդարադատության նախարարության հանրային ռեեստրի ազգային գործակալությունը:

Փոքր ձեռներեցի կարգավիճակի շնորհման համար, արտադրող ֆիզիկական անձը դիմում է հարկային մարմնին: Փոքր ձեռներեցի կարգավիճակն անձին շնորհվում է դիմումում վավերացված օրվանից: Փոքր ձեռներեցի կարգավիճակի վերացման դեպքում, արտադրող ֆիզիկական անձն իրավասու է հենց այդ տարում էլ կարգավիճակի կրկնական շնորհման պահանջով դիմել հարկային մարմնին եւ կրկին ստանալ կարգավիճակ:

Ինչպես մամուլի ասուլիսում նշեց Վրաստանի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին, փոքր ձեռներեցության կարգավիճակի ու հարկադրման նոր կարգի վերաբերյալ տեղեկատվական քարոզարշավը կանցկացվի Վրաստանի ողջ մասշտաբով, եւ համապատասխան ժամանակացույցը կիրապարակվի եկամուտների ծառայության պաշտոնական կայքում:

Հիշեցնենք, որ բարեփոխումների նոր ալիքի շրջանակներում, վերոնշյալ նախաձեռնությունը դեռեւս ընթացիկ տարվա մեկնարկին ներկայացրեց ներկայիս վարչապետ Մամուկա Բախտաձեն, ֆինանսների նախարարի պաշտոնում աշխատելու ժամանակ: Երկրի ողջ մասշտաբով կանցկացվեն հանդիպումներ փոքր ձեռներեցների հետ, որի ընթացքում նրանց մանրամասն տեղեկատվություն կներկայացվի բարեփոխմամբ նախատեսված նորամուծությունների մասին:

Վերոնշյալ բարեփոխման արդյունքները կլինեն դրական, քանի որ դրանք նոր ազդակ, նոր խթան կհաղորդեն երկրում միջին եւ փոքր ձեռներեցության զարգացմանը:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ 623 ՓԱՍՏ

Հունիսի 23-ից հուլիսի 1-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մոնիտորինգի դեպարտամենտի կողմից, երկրի մասշտաբով իրականացված վերահսկիչ միջոցառումների արդյունքում բացահայտվել է հարկային իրավախախտման 623 փաստ: Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի աշխատակիցների կողմից ստուգման է ենթարկվել 3564 հարկատու, ստուգման արդյունքում վավերացվելն են հետեւյալ հարկային օրինախախտումները. առանց ապրանքագրերի ապրանքի տեղափոխման 99 փաստ, տնտեսական գործունեության համար հարկատուի կողմից Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման 37 դեպք, կանխիկ գումարով գործարքի ժամանակ գանձարկղային սարքի չօգտագործման 487 փաստ:

ԿԱՆԽՎԵԼ Է ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ

Հունիսի 28-ից հուլիսի 2-ը ներառյալ, «Նինոծմինդա» եւ «Քութայիսիի օդանավակայան» մաքսային անցակետերում կանխվել են ապօրինաբար թմրանյութեր երկիր ներբերելու դեպքեր:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Վրաստանի, Հայաստանի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի քաղաքացիներին: Ուղեւորաբեռի ստուգման ժամանակ հայտնաբերել են հոգեբուժական (114 հաբ, 55 կապսուլ), թմրանյութերի (64 հաբ, 26 կապսուլ) դեղորայք եւ 10 գրամ մարիխուանա:

Հունիսի 29-ին, «Սարփի» մաքսային անցակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները կանխել են մեծ քանակության թմրանյութ ներկրելու փաստը: Կասկածի հիման վրա խուզարկության ենթարկած Թուրքիայի քաղաքացու ուղեբեռում գտնված դեղորայքի թվում հայտնաբերվել է 450 հազար կապսուլ չհայտագրված թմրանյութ:

Վերոնշյալ գործերի նյութերը հետաքննության համար առաքվել են ներքին գործերի նախարարություն:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ